«ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԿՈԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

1. Ընդհանուր դրույթներ

«Արփա-Սևան» ԲԲԸ (այսուհետ՝ գործատու), ի դեմս ընկերության գլխ. տնօրեն Պ. Հակոբյանի, մի կողմից, և աշխատավորական կոլեկտիվի արհեստակցական կազմակերպությունը, ի դեմս արհկոմի նախագահ Ա. Ղազարյանի, մյուս կողմից, ելնելով աշխատողների և գործատուի իրավունքների ու շահերի պաշտպանությունից, կողմերի փոխադարձ հարաբերությունների հստակեցումից, աշխատանքի բարենպաստ պայմանների և կազմակերպության արդյունավետ տնտեսավարման շահերից, ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսդրությամբ և ընկերության կանոնադրությամբ, կնքեցին սույն կոլեկտիվ պայմանագիրը:

2. Կողմերի համատեղ պարտականությունները

Կողմերը պարտավորվում են համաձայնեցված քաղաքականություն վարել կազմակերպության արդյունավետ տնտեսավարման ապահովման և սոցիալ տնտեսական ծրագրերի իրագործման համար, նպաստել աշխատանքի որակի ու եկամուտների բարձրացմանը և դրանց հիման վրա աշխատողների նյութական և սոցիալ-կենցաղային պայմանների բարելավմանը:

3. Գործատուի իրավունքները

Գործատուն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ և իր կանոնադրությամբ սահմանված կարգով՝ սահմանել.

- Գործատուի վարչակազմակերպչական կառուցվածքը:
- Գործունեության ներքին կանոնակարգը:
- Ընդունել, ազատել կամ փոխադրել այլ աշխատանքի վարձու աշխատողներին, որոշել նրանց թվաքանակը, աշխատանքի ու հանգստի պայմանները, աշխատավարձի և նյութական խրախուսման ձևերը:
- Օրենքով սահմանված կարգով կիրառել արտաժամյա աշխատանքներ:
- Փորձաշրջանով, ժամանակավոր և սեզոնային աշխատանքներում զբաղված աշխատողների համար սահմանել աշխատանքի հատուկ պայմաններ, որոնք կարտացոլվեն ընկերության ներքին իրավական ակտերում:
- Հատուկ մասնագիտական գիտելիքներ պահանջող աշխատանքների կատարման կամ պաշտոնների նշանակման համար անցկացնել նոր ընդունվող աշխատողների նախնական որակավորման ստուգումներ: Աշխատատեղերի և աշխատողների պարբերական որակավորման ստուգումները անցկացնել գործատուի

գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերով սահմանված կարգով: Միջոցներ ձեռնարկել աշխատողների որակավորումը բարձրացնելու համար:

- Կարգապահական և նյութական պատասխանատվության ենթարկել աշխատանքային կարգապահությունը խախտողներին և այն աշխատողներին, որոնց մեղքով գործատուին վնաս է հասցվել, և պատճառած վնասի գումարը գանձել նրանց աշխատավարձից:

Անօրինական ճանաչված գործադուլի դեպքում՝ օրենքով սահմանված կարգով պահանջել փոխհատուցել գործատուին և այլ անձանց պատճառած վնասները:

4. Գործատուի պարտականությունները

Գործատուն պարտավոր է՝

4.1 Իր գործունեությունն իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությանը, գործատուի կանոնադրությամբ իրեն վերապահված իրավունքներին և սույն պայմանագրի դրույթներին համապատասխան:

4.2 Աշխատողների համար ապահովել աշխատանքի անվտանգ և նրանց աշխատունակությանն ու առողջությանը չվնասող պայմաններ, ապահովել անվտանգության տեխնիկայի, հակահրդեհային միջոցառումների, հիգիենայի կանոնները, ելնելով աշխատանքային պայմաններից՝ աշխատողներին տրամադրել անվճար արտահագուստ և այլ պաշտպանիչ միջոցներ՝ համաձայն գործող նորմերի պահանջների:

Պահանջել աշխատողից հատուցել իր կողմից պատճառած վնասը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.3 Արտադրական միջավայրում և աշխատանքային գործընթացի վնասակար գործոնների ազդեցության պայմաններում աշխատողների համար կազմակերպել առողջության նախնական, պարբերական և արտահերթ բժշկական զննություններ ՀՀ կառավարության սահմանված կարգով:

4.4 Ելնելով աշխատանքի պայմաններից սահմանել՝

4.4.1. Աշխատաժամանակի նորմալ տևողությունը կազմում է շաբաթական 40 ժամ՝ շաբաթ և կիրակի հանգստյան օրերով, իսկ առավելագույն տևողությունը, ներառյալ, արտաժամյա աշխատանքները, չի կարող անցնել շաբաթվա ընթացքում 48 ժամից: Ընկերության ստորգետնյա աշխատողների համար սահմանվում է շաբաթական 36 ժամ աշխատաժամանակ:

4.4.2. Ելնելով արտադրության տեխնիկական պայմաններից և առանձնահատկություններից, ինչպես նաև չընդհատվող ռեժիմով աշխատանքի բնույթից, ընկերության տեղամասերում աշխատողների համար հանգստյան օրերը գործատուն կարող է հատկացնել շաբաթվա այլ օրերին՝ աշխատանքի ժամանակացույցով յուրաքանչյուր խմբի աշխատողների համար սահմանված հերթականությամբ: Տվյալ տեղամասերում աշխատանքի բնույթով և պայմաններով պայմանավորված

աշխատողների համար կարող է սահմանվել վեցօրյա աշխատանքային շաբաթ մեկ հանգստյան օրով:

4.4.3. Տոնական և հիշատակի օրերի նախօրյակին աշխատանքային օրվա տևողությունը կրճատել 1 ժամով, բացառությամբ աշխատաժամանակի երճատ և հերթափոխային պայմաններով աշխատողների:

4.5. Աշխատանքային օրն սկսվելուց 4 ժամ հետո աշխատողներին տրամադրել 30 րոպեից մինչև մեկ ժամ տևողությամբ ընդմիջում՝ հանգստանալու և սնվելու համար: Ընդմիջման սկիզբը և ավարտը սահմանվում է գործատուի ներքին կարգապահական կանոններով:

4.6 Ամենամյա վճարովի արձակուրդ տրամադրել՝ հնգօրյա աշխատանքային շաբաթ աշխատելու դեպքում՝ 20 աշխատանքային օր, իսկ վեցօրյակի դեպքում՝ 24 աշխատանքային օր:

Լրացուցիչ վճարովի արձակուրդներ տրամադրել՝

- Աշխատանքի վտանգավոր և վնասակար պայմաններում աշխատողներին
- Չնորմավորված աշխատանքային օրով աշխատողներին

(Հավելված 1)

4.6.1 Հինգ աշխատանքային օր չվճարվող արձակուրդ տրամադրել ամուսնության և ընտանիքի մահացած անդամի թաղման համար:

4.7 Յուրաքանչյուր աշխատանքային տարվա արձակուրդը, որպես կանոն, տրվում է տվյալ տարում, բայց ոչ ուշ, քան 18 ամսվա ընթացքում,՝ սկսած աշխատանքային տարվա վերջից, որի համար աշխատողին չի հատկացվել կամ մասնակի է հատկացվել ամենամյա արձակուրդը: Ամենամյա արձակուրդից հետ կանչելը կամ տեղափոխումը թույլատրվում է միայն աշխատողի միջնորդությամբ կամ համաձայնությամբ: Տեղափոխված ամենամյա արձակուրդը տրվում է նույն տարում կամ կարող է միացվել հաջորդ տարվա արձակուրդին:

4.8 Ամենամյա արձակուրդի փոխարինումը դրամական հատուցմամբ չի թույլատրվում, բացառությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելիս:

4.9 Կողմերի համաձայնությամբ աշխատողին կարող է տրամադրվել չվճարվող արձակուրդ՝ մեկ տարվա ընթացքում , ոչ ավելի քան 60 օր:

4.10 Աշխատողների ժամային տարիֆային դրույքները հաշվարկել՝ ելնելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի մեծությունից, աշխատանքային պայմաններից, աշխատաժամանակի տևողությունից, գործատուի կողմից հաստատված տարիֆային և պաշտոնային դրույքներից, ինչպես նաև կնքված անհատական աշխատանքային պայմանագրերից (Հավելված 2):

Ընկերության ղեկավարների, մասնագետների և ծառայողների պաշտոնային դրույքները հաշվարկել համաձայն ընկերության խորհրդի կողմից հաստատված հաստիքացուցակի: Աշխատանքի նորմալ պայմաններից շեղումների դեպքում կատարել հետևյալ հավելումները:

- Առողջության համար վնասակար և ծանր աշխատանքի կատարման դեպքում ոչ պակաս քան պաշտոնային կամ տարիֆային դրույքի 30%-ի չափով, առանձնապես

վնասակար և առանձնապես ծանր աշխատանքի կատարման դեպքում՝ ոչ պակաս քան 50%-ի չափով:

- 2010թ. օգոստոսի 7-ից հետո ծագած աշխատանքային հարաբերությունների համար գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար պաշտոնային կամ տարիֆային դրույքին սահմանել հավելում ժամային կամ պաշտոնային դրույքաչափի ոչ պակաս 30%-ի չափով: Արտաժամյա յուրաքանչյուր ժամի համար վճարել աշխատողի համար սահմանված դրույքաչափի ոչ պակաս, քան 50%-ի չափով: Մինչև 2010թ. օգոստոսի 7-ը կնքված աշխատանքային պայմանագրերով աշխատողների համար արտաժամյա և գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար սահմանել հավելում՝ ժամային դրույքաչափի մեկուկես անգամից ոչ պակաս չափով:
- Հանգստյան և օրենքով սահմանված ոչ աշխատանքային տոնական և հիշատակի օրերին աշխատելու համար, եթե նախատեսված չէ աշխատանքային ժամանակացույցով, վարձատրվում է ժամային (օրական) դրույքաչափի կամ գործավարձի առնվազն կրկնակի չափով, կամ աշխատողի ցանկությամբ 1 ամսվա ընթացքում նրան տրամադրել վճարովի այլ հանգստյան օր, կամ այդ օրը ավելացվում է ամենամյա արձակուրդին:

  Աշխատանքի ժամանակացույցով օրենքով սահմանված ոչ աշխատանքային տոնական և հիշատակի օրերին կատարված աշխատանքը վարձատրվում է ժամային (օրական) դրույքաչափի կամ գործավարձի առնվազն կրկնակի չափով:
- Ոչ աշխատողի մեղքով պարապուրդի ժամանակը, եթե աշխատողին չի առաջարկվում նրա մասնագիտությանը և որակավորմանը համապատասխան այլ աշխատանք, պարապուրդի յուրաքանչյուր ժամվա համար վճարվում է միջին աշխատավարձի 2/3-ի չափով, բայց ոչ պակաս օրենքով սահմանված նվազագույն ժամային դրույքից: Եթե աշխատողը հրաժարվում է առաջարկված ժամանակավոր աշխատանքից, ապա պարապուրդի յուրաքանչյուր ժամվա համար վճարվում է սահմանված նվազագույն ժամային դրույքաչափի 30%-ի չափով:
- Աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները յուրաքանչյուր ամիս հաշվարկել և վճարել, առնվազն մեկ անգամ, մինչև հաջորդ ամսվա 15-ը: Եթե վճարումները կատարվում են սահմանված ժամկետի խախտումներով, ապա աշխատավարձի վճարման կետանցված յուրաքանչյուր օրվա համար գործատուն աշխատողին վճարում է տույժ վճարման ենթակա աշխատավարձի 0.15%-ի չափով, բայց ոչ ավելի, քան վճարման ենթակա գումարի չափը:
- Փոխհատուցում վճարել այն աշխատողներին, որոնք իրենց անձնական գույքը օգտագործում են գործատուի կարիքների համար, համաձայն գործատուի և աշխատողի միջև կնքված պայմանագրի:
- Գործատուն աշխատավարձը վճարելիս, բոլոր աշխատողներին ներկայացնում է հաշվարկային թերթիկներ, որոնցում նշվում են հաշվարկված, աշխատողին վճարված և պահված գումարները:

5. Երաշխիքներ և հատուցումներ

5.1. Միջնակարգ մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորող աշխատողի ուսումնական արձակուրդի յուրաքանչյուր օրվա համար գործատուն աշխատողին վճարում է միջին օրական աշխատավարձից ոչ պակաս չափով:

5.2. Աշխատանքի բնույթով պայմանավորված առողջության ստուգման համար ծախսվող ժամանակի համար աշխատողին վճարվում է միջին աշխատավարձը, որի հաշվարկման համար հիմք է ընդունվում միջին ժամային աշխատավարձի չափը:

5.3. Դաշտային պայմաններում կամ տեղափոխման բնույթ կրող աշխատանքների կատարման դեպքում գործատուն աշխատողին հատուցում է նրանց կատարած լրացուցիչ ծախսերը, ՀՀ կառավարության և գործատուի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերով սահմանված կարգով:

5.4. Գործուղման մեկնած աշխատողին երաշխավորվում է նրա աշխատատեղի և աշխատավարձի պահպանումը գործուղման ամբողջ ժամանակահատվածում, ինչպես նաև նրան վճարվում է օրապահիկ և հատուցվում են գործուղման հետ կապված ծախսերը:

5.5. Աշխատանքի առանձնահատկությամբ պայմանավորված առողջության հետ կապված հնարավոր վնասակար հետևանքները կանխարգելու նպատակով աշխատողներին տրամադրել հատուկ սնունդ (Հավելված 3):

6. Աշխատողների պարտականությունները

Աշխատողը պարտավոր է բարեխղճորեն կատարել իր կողմից ստանձնած պարտավորությունները, պահպանել կազմակերպության ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը, կատարել աշխատանքի սահմանված նորմաները, պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության կանոնները, բարեխղճորեն վերաբերվել գործատուի և այլ անձանց գույքին:

7. Արհեստակցական կազմակերպության պարտականությունները

Արհեստակցական կազմակերպությունը պարտավոր է՝

1. Իր գործունեությամբ աջակցել աշխատակիցներին և նպաստել աշխատավորական կոլեկտիվում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի պահպանմանը և կայունացմանը:
2. Աշխատանքային հարաբերություններում ներկայացնել և պաշտպանել աշխատողների աշխատանքային, մասնագիտական և սոցիալ-տնտեսական շահերն ու իրավունքները ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքով, "Արհեստակցական միությունների մասին" ՀՀ օրենքով և իր կանոնադրությամբ:

8. Արհեստակցական կազմակերպության իրավունքները

Արհեստակցական կազմակերպությունը իրավունք ունի՝

1. Վարելու կոլեկտիվ բանակցություններ, կնքել կոլեկտիվ պայմանագրեր, իրականացնել դրանց կատարման հսկողությունը:
2. Կազմակերպել և գլխավորել գործադուլներ և օրինական այլ միջոցառումներ, որոնց անցկացման իրավունքն ունեն աշխատողները:
3. Գործատուին ներկայացնել առաջարկություններ աշխատանքի կազմակերպման վերաբերյալ:
4. Անցկացնելու մարզական, կուլտուր-մասսայական, ինչպես նաև հանրապետության մշակութային կյանքին աշխատողներին հաղորդակից դարձնելու ուղղված միջոցառումներ:
5. Աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի կատարման նկատմամբ իրականացնել ոչ պետական վերահսկողություն:
6. Կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերին հակասող կամ աշխատողների ներկայացուցչի իրավունքները խախտող գործատուի կամ նրա լիազորված անձանց հակաօրինական որոշումները և գործողությունները բողոքարկել դատական կարգով:

9. Կողմերի փոխհարաբերությունները

1. Սույն պայմանագրի կողմերը՝ գործատուն և արհեստակցական կազմակերպությունը, պարտավորվում են ընդունել և հարգել կողմերից յուրաքանչյուրի իրավունքները, բարեխղճորեն կատարել իրենց պարտականությունները:
2. Գործատուն անհատույց տրամադրում է արհմիությանը սենյակ՝ իր կահավորանքով և կապի միջոցներով, ինչպես նաև ապահովում է նշված սենյակի պահպանումը, իսկ արհմիության համաժողովի անցկացման համար՝ տրամադրում է դահլիճ:

Բոլոր այն դրույթները, որոնք արտացոլված չեն սույն պայմանագրում, կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ և ընկերության ներքին իրավական ակտերով:

10. Եզրափակիչ դրույթներ

1. Սույն կոլեկտիվ պայմանագիրը կնքվում է 3 տարի ժամկետով, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև նոր պայմանագրի կնքումը:
2. Սույն պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել կողմերից յուրաքանչյուրի առաջարկությամբ , որոնք չեն հակասի գործող աշխատանքային օրենսդրությանը և կարժանանան կոլեկտիվի ընդհանուր ժողովի հավանությանը:

3. Սույն կոլեկտիվ պայմանագրի կատարման հսկողությունն իրականացնում են ստորագրող կողմերը և հաշվետվություն են տալիս պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման մասին աշխատողների ժողովին (համաժողովին) հաշվետու տարվա ավարտից ոչ ուշ, քան վեց ամսվա ընթացքում:

4. Սույն կոլեկտիվ պայմանագրով նախատեսված պարտականությունների չկատարման կամ անպատշաճ կատարման համար կողմերը կրում են պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կոլեկտիվ պայմանագիրը հավանության է արժանացել աշխատողների ժողովի կողմից և ուժի մեջ է մտնում 2013թ. հոկտեմբերի 1-ից:

Ստորագրված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ:

Հաստատված՝	Արհեստակցական
Գործատուի կողմից	կազմակերպության կողմից
«Արփա-Սևան» ԲԲԸ	
Գլխ. տնօրեն Պ. Հակոբյան	Նախագահ Ա. Ղազարյան

Հավելված 1

«Արփա-Սևան» ԲԲԸ
Ամենամյա լրացուցիչ արձակուրդների տրամադրման կարգ

Սույն կարգով սահմանվում է «Արփա-Սևան» ԲԲԸ ամենամյա լրացուցիչ արձակուրդների իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, այդ արձակուրդների տևողությունը և դրանց տրամադրման պայմանները:

Ցանկ

ամենամյա լրացուցիչ արձակուրդների իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների և լրացուցիչ արձակուրդի տևողությունը

h/h	Մասնագիտությունը, բնագավառը	Աշխատանքային օր	
		հնգօրյա աշխ. շաբաթ	վեցօրյա աշխ. շաբաթ
1	Լեռնագործ, բեռնատար մեքենայի վարորդ և բանվոր այլ մասնագիտությունների, ստորգետնյա և բաց եղանակներով օգտակար հանածոների արդյունահանման, պայթեցնող, քարտաշ, քար մշակող և հարակից մասնագետ	9	10
2	Շինարար-տեղակայորդ և հարակից մասնագետներ	5	6
3	Բանվոր-հարդարողներ՝ զբաղված շինարարական և շինորոգման աշխատանքներում և հարակից մասնագետներ	5	6
4	Ներկարար, բանվոր շենքերի և շինությունների մակերևույթների մաքրման և հարակից մասնագետներ	5	6
5	Բանվոր և բեռնատար մեքենաների վարորդ՝ զբաղված հանքահորերի (հանքերի), բացահանքերի (կտրվածքների), մետրոպոլիտենների, թունելների և հատուկ նշանակություն ունեցող ստորգետնյա կառույցների շինարարությունում	9	10
6	Կաղապարող, եռակցող, դարբին, գրտնակիչ, կառուցվածքային (կոնստրուկցիոն) մետաղի նախապատրաստող և հարակից նախապատրաստողներ, հարակից մասնագետներ	5	6
7	Եռակցող, էլեկտրագազաեռակցող, գազակտրող և հարակից մասնագետներ	5	6
8	Վերամբարձ կռունկի մեքենավար (կռունկավար) և հարակից մասնագետներ	5	6
9	Հավաքորդ-փականագործ էլեկտրական, էլեկտրամեխանիկական և ռադիոէլեկտրական սարքերի և հարակից մասնագետներ	5	6
10	Հիմնային և թթվային մարտկոցներ լիցքավորող ու սպասարկող աշխատող	5	6
11	Օդվի մակերևույթից 2000 մետրից ավելի բարձրության վրա աշխատանքներ կատարող ճարտարագիտական-տեխնիկական աշխատող	5	6
12	Չնորմավորված աշխատանքային ռեժիմով աշխատողներ	5	5

Լրացուցիչ արձակուրդների տրման պայմանները

1. Ամենամյա լրացուցիչ արձակուրդների իրավունք ունեցող աշխատողների լրացուցիչ արձակուրդների օրերը ամբողջությամբ տրվում են այն աշխատողներին, որոնք արձակուրդի հաշվարկման տարում նշված պայմաններում փաստացի աշխատել են (հաշվի առնելով ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված այն ժամանակահատվածները, որոնք ընդգրկվում են աշխատանքային տարվա մեջ) ոչ պակաս 11 ամսից:

2. Եթե աշխատողը տվյալ տարում լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող պայմաններում աշխատել է 11 ամսից պակաս, ապա լրացուցիչ արձակուրդի օրերը հաշվարկվում է համապատասխան այդ պայմաններում աշխատած փաստացի ամիսների համար:

3. Սույն կարգով չարծածված լրացուցիչ արձակուրդի տրամադրման պայմանները կարգավորվում են ՀՀ կառավարության 2005թ. օգոստոսի 11-ի N1384-Ն և օգոստոսի 11-ի N1599-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 2011թ. N1239-Ն որոշմամբ սահմանված կարգով:

«Արփա-Սևան» ԲԲԸ
Չնորմավորված աշխատանքային ռեժիմով ղեկավարների,
մասնագետների և ծառայողների

Ցանկ

1. Գլխավոր տնօրեն, գլխավոր տնօրենի տեղակալներ:
2. Վարչական ապարատի բաժնի պետեր, գլխավոր մասնագետներ:
3. Ստորաբաժանումների պետեր:

Հավելված 2

«Արփա-Սևան» ԲԲԸ
կոլեկտիվ պայմանագրի

Ղեկավարվելով «Նվազագույն աշխատավարձի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-61-Ն ՀՀ օրենքով ընդունված 20.06.2013թ. «Արփա-Սևան» ԲԲԸ կոլեկտիվ պայմանագրի 4.10 կետի գործարքային և ժամավարձով աշխատող բանվորական և վարորդական անձնակազմի ժամային տարիֆային դրույքները փոխարինել ներքոհիշյալ աղյուսակով:

Աշխատանքային պայմաններ	ժամային տարիֆ դրույք
աշխատաժամանակի նորմալ տևողության դեպքում (40 ժամյա աշխատանքային շաբաթ)	360 դրամ
Աշխատաժամանակի կրճատ տևողության դեպքում (36 ժամյա աշխատանքային շաբաթ)	400 դրամ

Հաստատված
Գործատուի կողմից

«Արփա-Սևան» ԲԲԸ
Գլխ. տնօրեն Պ. Հակոբյան

Արհեստակցական
կազմակերպության կողմից

Նախագահ Ա. Ղազարյան

Հավելված 3

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«Արփա-Սևան» ԲԲԸ-ի գլխ. տնօրեն
_____Ա. Հակոբյան
«01» 10 2013թ.

«Արփա-Սևան» ԲԲԸ-ի ստորաբաժանումներում առողջության համար վնասակար պայմաններում աշխատողի օրական հասանելիք հատուկ սննդի

ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ

h/h	Մթերքի անվանումը	Չափման միավոր	Չափաքանակը
1	*2*	*3*	*4*
1	կաթ	լ.	0.50
2	Մածուն	կգ.	0.50
3	Կարագ	կգ.	0.05
4	Պանիր	կգ.	0.05
5	Թթվասեր	կգ.	0.20
6	Կաթնաշոռ	կգ.	0.10

Գլխ. տնօրենի I-ին տեղակալ,
գլխ ճարտարագետ Ա. Հակոբյան

Գլխ. հաշվապահ Ս. Փարսյան

ԱՏ ճարտարագետ Վ. Խոյեցյան